ՔՀԿ ՉԱՓԻՉ

Քաղաքացիական հասարակության միջավայրի գնահատում Արևելյան գործընկերության երկրներում

Հայաստանի զարգացումները

ԵՐԵՎԱՆ

2020

European Center for Not-for-Profit Law

Funded by the European Union

ԹՐԱՆՍՓԱՐԵՆՍԻ ԻՆԹԵՐՆԵՇՆԼ հակակոռուպցիոն կենտրոն

Հեղինակներ՝ Անուշ Հակոբյան, Տաթևիկ Մարգարյան (Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն)

Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնի (ԹԻՀԿ) առաքելությունն է կոռուպցիան նվազեցնելու ու ժողովրդավարությունն ամրապնդելու ճանապարհով նպաստել լավ կառավարմանը Հայաստանում: Կազմակերպության նպատակներն են՝ (1) աջակցել արդյունավետ հակակոռուպցիոն քաղաքականությանը և թափանցիկ ու հաշվետու կառավարմանը, (2) աջակցել ազատ, արդար ու թափանցիկ ընտրությունների անցկացմանը և ընտրական ինստիտուտի կայացմանը, (3) նպաստել հանրային ռեսուրսների, այդ թվում՝ պետական և համայնքային սեփականության ու ֆինանսական միջոցների ողջամիտ, թափանցիկ և հաշվետու կառավարմանը, (4) խթանել ժողովրդավարական գործընթացները, այդ թվում՝ մարդու իրավունքների պաշտպանությունը և հասարակության մասնակցությունը երկրի կառավարման գործընթացներում: ԹԻՀԿ-ը հետամուտ է համագործակցել պետական իշխանության մարմինների հետ այն նախաձեռնությունների շուրջ, որոնք դրական ազդեցություն են նախատեսում ընթացիկ բարեփոխումների համար կամ խթանում են հանրային նոր քաղաքականություն, և սկզբունքային հակադրություն է ցուցաբերում իշխանությունների այն որոշումներին, որոնք ակնհայտորեն սպառնում են արդյունավետ կառավարման իրականացմանը:

Ոչ առևտրային իրավունքի եվրոպական կենտրոն (ECNL) հիմնադրամը քաղաքացիական հասարակության վրա ազդող քաղաքականությունների և օրենքների ոլորտում առաջատար ռեսուրսային և հետազոտական կենտրոն է Եվրոպայում: ECNL-ն աջակցում է այնպիսի միջավայրի ձևավորմանը, որտեղ մարդիկ կարող են ազատ կազմակերպվել, համատեղ կերտել և նպաստել հասարակությունների զարգացմանը: ECNL-ի գործունեությունն օգնում է ստեղծել այնպիսի պայմաններ, որոնք քաղաքացիական հասարակության կազմակերպություններին հնարավորություն են տալիս գործել ինքնուրույն, լինել ֆինանսապես կայուն, ունենալ ուժեղ կառավարում, մասնակցել հանրային քաղաքականությանը և մոբիլիզացնել հասարակության աջակցությունը: Քաղաքացիական հասարակության նպաստավոր միջավայր ապահովող քաղաքականության մշակումից և ջատագովումից զատ՝ ECNL- ն հզորացնում է տեղական շահագրգիռ կողմերին, վերահսկում է գործիքների և մեխանիզմների իրականացումը և զարգացնում է գիտելիքային հենքն իր հետազոտությունների և վերլուծությունների միջոցով:

Հեղինակները շնորհակալություն են հայտնում բոլոր մասնակիցներին՝ զեկույցի մշակման ընթացքում ներդրում ունեցած խորհրդատվական խմբի անդամներին և ՔՀԿ ոլորտի փորձագետներին, ինչպես նաև Էսթեր Հարթային և Լյուբեն Պանովին՝ իրենց արժեքավոր առաջարկների ու նկատառումների համար:

© 2020 Ոչ առևտրային իրավունքի եվրոպական կենտրոն հիմնադրամ և Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն: Բոլոր հեղինակային իրավունքները պաշտպանված են:

Սույն հրապարակումը մշակվել է Եվրոպական Միության ֆինանսական աջակցությամբ: Բովանդակության համար պատասխանատու է միայն Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնը, և այն պարտադիր չէ, որ արտացոլի Եվրոպական Միության դիրքորոշումը:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հապավումների ցանկ 7

I. Համառոտագիր 8

II. Ընդհանուր տեղեկատվություն 10

III. Հիմնական զարգացումներ 12

3.1 Միավորումների ազատություն 12

3.2 Հավասար վերաբերմունք 13

3.3 Ֆինանսավորման մատչելիություն 14

3.4 Խաղաղ հավաքների ազատություն 14

3.5 Որոշումների ընդունման գործընթացում մասնակցության իրավունք 16

3.6 Խոսքի ազատություն 18

3.7 Մասնավոր կյանքի իրավունք 20

3.8 Պետության կողմից պաշտպանության պարտականություն 21

3.9 Պետական աջակցություն 22

3.10 Պետություն-ՔՀԿ համագործակցություն 23

3.11 Այլ զարգացումներ 24

IV. Հիմնական առաջնահերթություններ 25

V. Հղումներ 27

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ԱԺ	Ազգային ժողով
ԱՄՆ ՄԶԳ	Ամերիկայի Միացյալ Նահանգների միջազգային զարգացման գործակալություն
ԲՀՀ	Բաց հասարակության հիմնադրամներ
ԵԱՀԿ	Եվրոպայում անվտանգության. և համագործակցության կազմակերպություն
ԵՄ	Եվրամիություն
ՁԼՄ	Ձանգվածային լրատվության միջոց
ԹԻՀԿ	Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն
ԼԳԲՏ	Լեսբի, գեյ, բիսեքսուալ, տրանսգենդեր համայնք
ԽԱՊԿ	Խոսքի ազատության պաշտպանության կոմիտե
ՀԿ	Հասարակական կազմակերպություն
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀՆԱ	Համախառն ներքին արդյունք
ՄԱԿ	Միավորված ազգերի կազմակերպություն
ՊԵԿ	ՀՀ պետական եկամուտների կոմիտե
ՍՊԸ	Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն
ՔՀԿ	Քաղաքացիական հասարակության կազմակերպություն

I. ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ

Այս հրապարակումը **լրացնում է «ՔՀԿ չափիչ» 2019 թվականի զեկույցի տվյալները՝** ներկայացնելով ՔՀԿ-ների միջավայրի ուսումնասիրման թարմացված արդյունքները **2019 թվականի հոկտեմբեր – 2020 թվականի հուլիս ժամանակահատվածի համար:** «ՔՀԿ չափիչը» Արևելյան գործընկերության երկրներում քաղաքացիական հասարակության միջավայրը գնահատելու գործիք է: Այն բաղկացած է 10 տարբեր ոլորտների ստանդարտներից և ցուցանիշներից, որոնք օգտագործվում են իրավական և գործնական միջավայրի գնահատման նպատակով:

«ՔՀԿ չափիչը» մշակվել է Եվրամիության կողմից ֆինանսավորվող «Առաջընթացի դիտարկում, գործողության խրախուսում» ծրագրի շրջանակներում և կիրառվել է «Ոչ առևտրային իրավունքի եվրոպական կենտրոնի» և Արևելյան գործընկերության երկրների մի շարք հասարակական կազմակերպությունների կողմից: Հայաստանում ծրագրի գործընկերը «Թրանսփարենսի Ինթերնեշնլ» հակակոռուպցիոն կենտրոնն է (ԹԻՀԿ): Այս զեկույցը մշակվել է իրավական ակտերի, վերջերս իրականացված հետազոտությունների և այլ նյութերի վերլուծության, ինչպես նաև փորձագիտական հարցազրույցների և խորհրդակցությունների միջոցով: Զեկույցն արտացոլում է «ՔՀԿ չափիչի» 10 ոլորտների առանցքային զարգացումները և առաջարկություններ ներկայացնում ՔՀԿ միջավայրի բարելավման առաջնահերթությունների վերաբերյալ:

Ինչպես շատ այլ երկրներում, Հայաստանում ևս **COVID-19 համավարակը էական ազդեցություն ունեցավ** ՔՀԿ-ների գործունեության վրա: 2020 թվականի մարտի 16-ին կառավարությունը հայտարարեց արտակարգ դրության մասին, որը զեկույցը մշակելու պահին երկարաձգվել էր մինչև օգոստոսի 12-ը: Արտակարգ դրությունը մի շարք սահմանափակումներ բերեց քաղաքացիական իրավունքների և ազատությունների, այդ թվում՝ ազատ տեղաշարժման իրավունքի, հավաքների ազատության, մասնավոր կյանքի գաղտնիության իրավունքի, խոսքի ազատության համար: Համավարակը որոշակի ազդեցություն թողեց ՔՀԿ-ների գործունեության և ֆինանսավորման, որոշումների կայացմանը մասնակցելու և պետության հետ համագործակցելու հնարավորությունների վրա: ՔՀԿ-ները մտավախություն ունեն, որ սահմանափակումները երկարատև հետևանքներ կունենան, մասնավորապես՝ մասնակցության գործիքների և տեղեկատվության մատչելիության սահմանափակումների առումով: Մյուս կողմից, համավարակը իր հետ բերեց նաև ֆինանսավորման նոր հնարավորություններ, էլեկտրոնային գործիքների օգտագործման կատարելագործված հմտություններ և պետության հետ համագործակցության նոր ոլորտներ:

«ՔՀԿ չափիչի» վերջին զեկույցից ի վեր **ՔՀԿ միջավայրի առավել նշանակալի փոփոխությունները** կապված են հասարակական կազմակերպությունների

համար պարտադիր տարեկան հաշվետվության ներդրման և, արտակարգ դրության պատճառով, իրավունքների և ազատությունների սահմանափակումների հետ: Փորձագետների կարծիքով, ընդհանուր առմամբ, ՔՀԿ միջավայրը վատթարացել է, որը հիմնականում պայմանավորված է համավարակի և արտակարգ դրության պատճառով առաջացած սահմանափակումներով: Առավել տուժած ոլորտներն են հավաքների ազատությունը և որոշումների ընդունման գործընթացին մասնակցելու իրավունքը:

ՔՀԿ-ների ընդհանուր թիվը նախորդ տարվա համեմատ փոքր-ինչ աճել է, ինչը պայմանավորված է նոր կազմակերպությունների գրանցմամբ: Միևնույն ժամանակ, ՔՀԿ-ների լուծարման դեպքեր գրեթե չկան, քանի որ այս գործընթացը պահանջում է վարչարարական մի շարք գործընթացներ և ֆինանսական ռեսուրսներ:

ՔՀԿ միջավայրի համար հիմնական առաջնահերթությունները «ՔՀԿ չափիչի» վերջին զեկույցից հետո առանձնապես չեն փոխվել: ՔՀԿ-ների ֆինանսական կայունությունը և մասնակցությունը քաղաքականության մշակմանն ու իրականացմանը մնում են առաջնահերթ խնդիրներ և առավել մեծ կարևորություն են ձեռք բերել համավարակի մարտահրավերների համատեքստում: Այս զեկույցում ներկայացված առաջարկությունները հիմնականում արտացոլում են «ՔՀԿ չափիչի» 2019 թվականի զեկույցի առաջարկությունները.

- անհատների և ընկերությունների նվիրատվությունների խրախուսման և ՔՀԿ-ների տնտեսական գործունեության խթանմանն ուղղված միջոցառումների իրականացում՝ նվիրատվությունների համար հարկային խթաններ, տնտեսվարող սուբյեկտների համեմատ ՔՀԿ-ների տնտեսական գործունեության նկատմամբ առնվազն հավասար հարկման մեխանիզմներ, պետական ֆինանսավորման արդյունավետության և թափանցիկության բարելավում.
- գործնականում մասնակցության իրավունքի իրացման բարելավում՝ քաղաքականության իրականացման և մոնիտորինգի գործընթացում ՔՀԿ-ների ներգրավման ինստիտուցիոնալ մեխանիզմների ներդրում, ներառյալ՝ պետության կողմից պատվիրակման միջոցով, որոշումների կայացման վաղ փուլերում քննարկումների պարտադիր իրականացում և մասնակցության այլընտրանքային գործիքների ու մեթոդների, օրինակ՝ առցանց միջոցների օգտագործում՝ արտակարգ իրավիճակում ՔՀԿ-ների մասնակցությունը ապահովելու համար.
- ՔՀԿ-ների նպաստավոր միջավայրի ճանապարհային քարտեզի մշակում, որը կարտացոլի առկա խնդիրները և անհրաժեշտ քայլեր կնախատեսի ՔՀԿ միջավայրի բարելավման ուղղությամբ:

II. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ընդհանուր տվյալներ

Մայրաքաղաք՝ Երևան
Բնակչությունը՝ 2 959 200 (2020)[1]
Մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն՝ 4212,071 ԱՄՆ դոլար (2018)[2]
Ազատությունն աշխարհում՝ 53/100 (բարելավում ի համեմատ 2018 թվականի 44/100 ցուցանիշի)[3]
Մամուլի ազատության համաշխարհային ինդեքս՝ 28.60 (բարելավում ի համեմատ 2019 թվականի 28.98 ցուցանիշի)[4]
ՔՀԿ-ների քանակը՝ 4892 հասարակական կազմակերպություն, 1237 հիմնադրամ[5]
ՔՀԿ-ների քանակը 10000 բնակչի հաշվով՝ 20,7
Գրանցման վճար՝ 10000 դրամ (մոտ 18 եվրո), գրանցման ժամանակահատված՝ 10 օր հասարակական կազմակերպությունների դեպքում, 15 օր՝ հիմնադրամների դեպքում

Նախորդ զեկույցից հետո տեղի ունեցած առանցքային իրադարձություններն ու զարգացումները, որոնք ազդեցություն են ունեցել քաղաքացիական հասարակության վրա

Ինչպես շատ այլ երկրներում, Հայաստանում ևս COVID-19 համավարակը էական ազդեցություն ունեցավ ՔՀԿ-ների գործունեության վրա: 2020 թվականի մարտի 16-ին կառավարությունը հայտարարեց արտակարգ դրության մասին, որը զեկույցը մշակելու պահին երկարաձգվել էր չորս անգամ՝ մինչև օգոստոսի 12-ը: Արտակարգ դրությունը մի շարք սահմանափակումներ բերեց քաղաքացիական իրավունքների և ազատությունների, այդ թվում՝ ազատ տեղաշարժման իրավունքի, հավաքների ազատության, մասնավոր կյանքի գաղտնիության իրավունքի, խոսքի ազատության համար: Միևնույն ժամանակ, համավարակը որոշակի ազդեցություն թողեց ՔՀԿ-ների գործունեության վրա՝ ազդելով ֆինանսավորման հնարավորությունների, որոշումների կայացմանը մասնակցելու եղանակների, ջատագովության նախաձեռնությունների և պետության հետ համագործակցության վրա: Թեև սահմանափակումները ժամանակավոր են, ՔՀԿ-ները մտահոգություն ունեն, որ դրանք կունենան երկարաժամկետ հետևանքներ,

[1] ՀՀ կառավարություն, https://www.gov.am/en/demographics/
[2] Համաշխարհային բանկ, https://data.worldbank.org/country/armenia
[3] Ֆրիդըմ Հաուս, https://freedomhouse.org/country/armenia/freedom-world/2020
[4] Մամուլի ազատության համաշխարհային ինդեքս, https://rsf.org/en/ranking
[5] ՀՀ ԱՆ Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունում գրանցված կազմակերպությունների վիճակագրությունը՝ 02.04.2020թ., http://moj.am/storage/files/legal_acts/legal_acts_8581148744251_stat_2020-03.pdf

մասնավորապես՝ մասնակցության գործիքների և տեղեկատվության մատչելիության սահմանափակումների առումով: Մյուս կողմից, համավարակն իր հետ բերեց նաև ֆինանսավորման նոր հնարավորություններ, էլեկտրոնային գործիքների օգտագործման կատարելագործված հմտություններ և պետության հետ համագործակցության նոր ոլորտներ:

Քաղաքացիական հասարակության հետ կապված կարևոր միտումները

ՔՀԿ իրավական միջավայրում տեղի ունեցած առավել նշանակալի փոփոխությունները կապված են հասարակական կազմակերպությունների համար պարտադիր տարեկան հաշվետվության ներդրման և արտակարգ դրության պատճառով իրավունքների և ազատությունների սահմանափակումների հետ: Գործնական մարտահրավերները կապված են համավարակի ընթացքում հավաքների կազմակերպման անհնարինության և տեղեկատվության մատչելիության և որոշումների կայացման գործընթացում մասնակցության խնդիրների, ինչպես նաև ատելության խոսքի և կեղծ լուրերի շարունակվող տարածման հետ: Ըստ փորձագետների՝ ՔՀԿ միջավայրն, ընդհանուր առմամբ, վատթարացել է, որը պայմանավորված է հիմնականում համավարակի և արտակարգ դրության պատճառով սահմանափակումներով:

ՔՀԿ-ների վերաբերյալ հանրային ընկալումը շարունակում է բարելավվել. Ըստ «Միջազգային հանրապետական ինստիտուտի» կողմից 2019 թվականի հոկտեմբերին Հայաստանում անցկացրած հարցման, հարցվածների 52%-ը ՔՀԿ-ների աշխատանքը համարում է բարենպաստ[6]: «Կովկասյան բարոմետր» ուսումնասիրության համաձայն՝ ՀԿ-ների նկատմամբ վստահությունը փոքր-ինչ բարելավվել է՝ 2017 թվականի 23%-ի համեմատ 2019 թվականին դառնալով 26%, իսկ չվստահող մարդկանց մասնաբաժինը նվազել է 30% -ից մինչև 25%[7]:

[6] Հասարակական կարծիքի հարցում Հայաստանի բնակչության շրջանում, Հասարակական հարցումների կենտրոն, Միջազգային հանրապետական ինստիտուտ, սեպտեմբեր-հոկտեմբեր 2019թ., https://www.iri.org/sites/default/files/wysiwyg/iri_poll_armenia_september-october_2019.pdf

[7] «Կովկասյան բարոմետր» տվյալադարան, Հայաստան, Վստահությունը հասարակական կազմակերպությունների նկատմամբ (%), https://caucasusbarometer.org/am/cb-am/TRUNGOS/

III.ՀԻՄՆԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ

Այս բաժնում ամփոփ ներկայացված են 10 ոլորտներից յուրաքանչյուրում տեղ գտած վերջին զարգացումները և նախորդ զեկույցի առաջարկություններին առնչվող փոփոխությունները:

3.1 Միավորումների ազատություն

Միավորումների ազատության ոլորտում առավել նշանակալի են ՔՀԿ օրենսդրության փոփոխությունները, որոնք կապված են հասարակական կազմակերպությունների և հիմնադրամների հաշվետվությունների պահանջների հետ: Քանի որ այս փոփոխությունների ազդեցությունը ՔՀԿ-ների վրա տեսանելի կլինի միայն երկարաժամկետ կտրվածքով, տվյալ պահին իրավիճակն այս ոլորտում գնահատվում է անփոփոխ:

2020 թվականի մարտին խորհրդարանն ընդունեց **«Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի փոփոխությունները**, ըստ որոնց՝ բոլոր հասարակական կազմակերպությունների համար սահմանվեց տարեկան հաշվետվությունների ներկայացման պահանջ: Ըստ այդմ, հասարակական կազմակերպությունները պարտավոր են մինչև հաջորդ տարվա մայիսի 30-ը գործունեության տարեկան հաշվետվություն հրապարակել՝ տեղեկատվություն ներառելով կազմակերպության գործունեության նպատակների, իրականացված ծրագրերի, տարեկան մուտքերի և օգտագործված միջոցների ընդհանուր գումարի, գումարված ժողովների քանակի, ինչպես նաև իրականացված ձեռնարկատիրական գործունեության մասին[8]: Հաշվետվության կարգի և օրինակելի ձևի վերաբերյալ Պետական եկամուտների կոմիտեի (ՊԵԿ) նախագահի համապատասխան հրամանը հրապարակվել է մայիսին, բայց ուժի մեջ մտել 2020 թվականի հունիսի 13-ից[9], հետևաբար հասարակական կազմակերպությունների համար հաշվետվության պահանջը լիարժեք կգործի հաջորդ տարի:

Փոփոխություններ են կատարվել նաև «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքում, ըստ որոնց հիմնադրամները կարող են անվճար հրապարակել իրենց տարեկան հաշվետվությունները հատուկ հարթակում, իսկ հիմնադրամի միջոցներից օգտվող աշխատողների անունները հրապարակելու պահանջը վերացվել է[10]: Բացի այդ, «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքի մեկ այլ փոփոխությամբ, որն ընդունվել էր 2019 թվականի դեկտեմբերի 4-ին,

[8] ՀՀ օրենքը «Հասարակական կազմակերպությունների մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին, 25.03.2020, https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=141094.
[9] ՀՀ ՊԵԿ նախագահի թիվ 477-Ն հրամանը «Հասարակական կազմակերպությունների գործունեության հաշվետվության օրինակելի ձևը, հրապարակման և ներկայացման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2019 թվականի փետրվարի 15-ի թիվ 102-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին», 27.05.2020, https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=142876
[10] ՀՀ օրենքը «Հիմնադրամների մասին օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին», 25.03.2020, https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=141081.

հիմնադրամների հաշվետվության ժամկետը մարտի 25-ից տեղափոխվել է հուլիսի 1-ը: Պետական եկամուտների կոմիտեն էլեկտրոնային փոստով ծանուցագրեր է ուղարկել հիմնադրամներին նոր հաշվետվական ձևերի վերաբերյալ, ինչը փորձագետների կողմից համարվել է որպես լավ պրակտիկա և հեշտացրել է հիմնադրամների հաշվետվության գործընթացը:

Թեև որոշ ՔՀԿ-ներ տարեկան հաշվետվության պահանջը բացասաբար ընդունեցին՝ այն լրացուցիչ բեռ համարելով հասարակական կազմակերպությունների համար, օրենսդրական փոփոխությունների ընդունված նախագիծը զգալի բարելավում էր փաստաթղթի առաջին տարբերակի համեմատ, ըստ որի հասարակական կազմակերպությունները պետք է հաշվետվության մեջ ներկայացնեին տեղեկություններ բոլոր դոնորների վերաբերյալ, ինչպես նաև հրապարակեին կազմակերպության միջոցներից օգտված աշխատակազմի, կամավորների և այլ փոխկապակցված անձանց անունները: Մյուս կողմից, հանրությանը ներկայացվող տարեկան հաշվետվությունները կարող են ՔՀԿ հատվածին օգնել բարելավելու իրենց թափանցիկությունն ու տեսանելիությունը, քանի որ Հայաստանում հանրության առջև հաշվետվողականությունն ու ՔՀԿ-ների նկատմամբ վստահությունը խնդրահարույց են եղել: Սույն զեկույցի մշակման գործընթացում ներգրավված փորձագետները գտնում են, որ հաշվետվության վերաբերյալ այս նոր դրույթի հնարավոր դրական և բացասական հետևանքները տեսանելի կլինեն երկարաժամկետ հեռանկարում:

3.2 Հավասար վերաբերմունք

Այս ոլորտում էական փոփոխություններ չեն գրանցվել: Հասարակական կազմակերպությունների համար պարտադիր տարեկան հաշվետվությունների վերաբերյալ դրույթը համահարթեցրել է հաշվետվության պահանջները հասարակական կազմակերպությունների և հիմնադրամների նկատմամբ: Այս ոլորտում հիմնական խնդիր է մնում ՔՀԿ-ների և առևտրային հատվածի նկատմամբ անհավասար մոտեցումը:

«Հասարակական կազմակերպությունների մասին» օրենքում կատարված փոփոխությունները **հավասարեցրել են հասարակական կազմակերպությունների և հիմնադրամների հաշվետվությունների ներկայացման պահանջները**: Մեկ այլ օրենսդրական փոփոխություն, որ դրական նշանակություն ունեցավ հասարակական կազմակերպությունների համար, **պարտադիր ֆինանսական աուդիտի համար սահմանված տարեկան ֆինանսավորման շեմի ավելացումն** էր 5 միլիոն դրամից (մոտ 9 400 եվրո) մինչև 10 միլիոն դրամ (մոտ 18 800 եվրո)[11]: Այս շեմն ու պարտադիր աուդիտի պահանջը սահմանված է միայն հանրային աղբյուրներից ստացվող միջոցների համար:

[11] ՀՀ օրենքը «Հասարակական կազմակերպությունների մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին, 04.12.2019, https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=137758.

Միևնույն ժամանակ, շեմի ավելացումը լիովին չի լուծել **տնտեսվարող սուբյեկտների համեմատ հասարակական կազմակերպությունների նկատմամբ անհավասար վերաբերմունքի խնդիրը**, որին անդրադարձ էր կատարվել «ՔՀԿ չափիչի» 2019 թվականի զեկույցում: Պետական գնումների մրցույթներին ներկայացվող հայտում աուդիտի ծախսերը ներառելու պատճառով առաջացող անհավասար մրցակցությունը, ինչպես նաև շրջանառության հարկի հնարավորության բացակայությունը զգալիորեն ավելի անբարենպաստ դիրքի մեջ են դնում տնտեսական գործունեություն ծավալող ՔՀԿ-ներին՝ ընկերությունների համեմատությամբ:

3.3 Ֆինանսավորման մատչելիություն

Այս ոլորտում էական փոփոխություններ չեն գրանցվել: COVID-19-ի և դրա հետևանքների դեմ պայքարի ուղղությամբ ֆինանսավորման նոր հնարավորություններ են ի հայտ եկել: Շարունակվում է բացասական հռետորաբանությունը Բաց հասարակության հիմնադրամների նկատմամբ:

ՔՀԿ-ների դրամահավաքի նախաձեռնությունները նոր թափ են առել COVID-19-ի իրավիճակում, քանի որ բազմաթիվ ՔՀԿ-ներ աջակցություն են տրամադրում առավել խոցելի սոցիալական խմբերին, որոնք զրկվել են եկամտի սակավաթիվ աղբյուրներից: Համավարակը դրամաշնորհային ֆինանսավորման նոր հնարավորություններ բերեց, որոնք տրամադրվում են ԱՄՆ ՄԶԳ-ի, Բաց հասարակության հիմնադրամների, Տարածաշրջանային համագործակցության սևծովյան հիմնադրամի և այլ կազմակերպությունների կողմից, և ՔՀԿ-ներից շատերն ընդլայնել են իրենց ծառայությունները՝ սոցիալական պաշտպանություն տրամադրելով անապահով խավերին և տեղեկատվություն տարածելով առողջության պաշտպանության միջոցառումների վերաբերյալ: Որպես բացասական միտում՝ շարունակվում է **ժխտողական հռետորաբանությունը** ԲՀՀ-ի, նրա կողմից ֆինանսավորվող (կամ ենթադրաբար ֆինանսավորվող) կազմակերպությունների և ակտիվիստների նկատմամբ:

3.4 Խաղաղ հավաքների ազատություն

Հավաքների ազատության վերաբերյալ իրավական կարգավորումները էապես չեն փոխվել «ՔՀԿ չափիչի» վերջին զեկույցից հետո: Այնուամենայնիվ, արտակարգ դրությամբ պայմանավորված սահմանափակումները զգալիորեն ազդել են հավաքների իրավունքի իրացման հնարավորությունների վրա, իսկ ինքնաբուխ հավաքների նկատմամբ ոստիկանության ոչ հետևողական մոտեցումը խնդրահարույց է սահմանափակումների հավասար և համաչափ կիրառման տեսանկյունից: Այսպիսով, ընդհանուր առմամբ, այս ոլորտում զարգացումը բացասական է:

Թեև հավաքների ազատության վերաբերյալ օրենսդրության մեջ փոփոխություններ չեն եղել, 2019 թվականի դեկտեմբերին ընդունված **Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունը** և դրանից

բխող 2020-2022 թվականների գործողությունների ծրագիրը այս ոլորտի բարելավմանն ուղղված մի շարք միջոցառումներ են ներառել, մասնավորապես՝ նպատակ դնելով նվազեցնել ոստիկանության կողմից հավաքների մասնակիցների իրավունքների խախտման դեպքերը[12]:

Ինչ վերաբերում է գործնական ոլորտին՝ մինչ համավարակով պայմանավորված արտակարգ դրությունը **տեղի են ունեցել մի շարք հավաքներ, որոնք հիմնականում կազմակերպվել են առանց իրազեկման**: Այդ հավաքների մեծ մասն ուներ հարյուրից պակաս մասնակից (որի դեպքում իրազեկում չի պահանջվում), իսկ մի քանիսը եղել են շտապ և ինքնաբուխ[13]: Արտակարգ դրության պայմաններում 2020 թվականի մարտի 16-ից **արգելվել են հանրային հավաքները, ինչպես նաև ավելի քան 20 անձի մասնակցությամբ հանրային միջոցառումները**, ներառյալ՝ համերգները, սպորտային և ժամանցային միջոցառումները, ուսումնական պարապմունքները, տոնական միջոցառումներն ու հուղարկավորությունները[14]: Մայիսի 14-ին արտակարգ դրությունը երկարաձգելու մասին որոշմամբ հանրային միջոցառման մասնակիցների առավելագույն թիվը սահմանվել է մինչև 5 անձ, իսկ հանրային հավաքների արգելքը պահպանվել է[15]: Միևնույն ժամանակ, այս ժամանակահատվածում տեղի են ունեցել ինքնաբուխ հավաքների մի քանի միջադեպեր, որոնք ոստիկանության կողմից հաճախ ցրվել են:

Արտակարգ դրության ժամանակ հավաքների հետ կապված հիմնական մարտահրավերներից մեկը **բողոքի ակցիաների արգելքն էր՝ անկախ մասնակիցների քանակից** (չնայած հանրային միջոցառումների դեպքում թույլատրվում էր մինչև հինգ մասնակից): Ավելին, նույնիսկ մեկ անձի բողոքի ակցիաները, երբեմն, մեկնաբանվել են որպես հավաք և ցրվել ոստիկանության կողմից: Ընդհանուր առմամբ, **ոստիկանությունը տարբերակված մոտեցում է ցուցաբերել օրենքի մեկնաբանման հարցում**, քանի որ որոշ ցույցերի դեպքում միջամտություն գրեթե չի եղել, իսկ մյուսները ուժի կիրառմամբ ցրվել են[16]:

---

[12] ՀՀ մարդու իրավունքների պաշտպանության ռազմավարությունից բխող 2020-2022թթ. գործողությունների ծրագիր, ՀՀ կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի N 1978-L որոշման Հավելված N 2, https://www.arlis.am/Annexes/5/Lokal_2020-1978hav2_inko.docx

[13] Խաղաղ հավաքների ազատության մշտադիտարկում (հոկտեմբեր-դեկտեմբեր 2019թ.), Զեկույց, Հայաստանի Հելսինկյան կոմիտե, Երևան, 2020 թ., http://armhels.com/wp-content/uploads/2020/01/Խաղաղ-հավաքների-մոնիթորինգ-հոկտեմբեր-դեկտեմբեր-2019-2.pdf; Խաղաղ հավաքների ազատության մշտադիտարկում (հունվար-մարտ 2020թ.), Զեկույց, Հայաստանի Հելսինկյան կոմիտե, Երևան, 2020 թ., http://armhels.com/wp-content/uploads/2020/04/Խաղաղ-հավաքների-մոնիթորինգ-հունվար-մարտ-2020.pdf

[14] ՀՀ կառավարության N 298-Ն որոշում Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրություն հայտարարելու մասին, 16.03.2020 (խմբ. 19.03.2020), https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=140392

[15] ՀՀ կառավարության N 729-N որոշումը Հայաստանի Հանրապետությունում 2020 թվականի մարտի 16-ին հայտարարված արտակարգ դրության ժամկետը երկարաձգելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի մարտի 16-ի N 298-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին, 14.05.2020, https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=142401

[16] Հայտարարություն արտակարգ դրության ընթացքում հավաքների ազատության իրավունքի վիճակի վերաբերյալ, 06.06.2020, Հայաստանի Հելսինկյան կոմիտե, http://armhels.com/wp-content/uploads/2020/06/Հայտարարություն.pdf

3.5 Որոշումների ընդունման գործընթացին մասնակցելու իրավունք

Մի շարք դրական իրավական կարգավորումների ընդունման հետ զուգահեռ, քաղաքականության մշակման գործընթացում ՔՀԿ-ների մասնակցությունը և տեղեկատվության մատչելիությունը զգալիորեն տուժել են համավարակից՝ հանգեցնելով այս ոլորտի վատթարացմանը:

2019 թվականի վերջին եռամսյակում **ՔՀԿ-ները շարունակել են ակտիվորեն մասնակցել մի շարք քաղաքականությունների և ռազմավարությունների մշակման գործընթացին**: Մասնավորապես, ՀՀ դատական և իրավական բարեփոխումների 2019-2023 թվականների ռազմավարությունը, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանության ռազմավարությունը և դրանից բխող 2020-2022 թվականների գործողությունների ծրագիրը, ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարությունը և 2019-2022 թվականների գործողությունների ծրագիրը ընդունվել են քաղաքացիական հասարակության խմբերի և միջազգային կազմակերպությունների մասնակցությամբ և նրանց հետ ծավալուն քննարկումից հետո: Չնայած օրենսդրությամբ դրանք պարտադիր չեն, Ազգային ժողովում պատգամավորների և խմբակցությունների նախաձեռնությամբ հանրային լսումներ և քննարկումներ են հրավիրվել:

Ի հակադրություն դրան՝ **2020 թվականի մարտին հայտարարված արտակարգ դրությունը զգալիորեն նվազեցրեց ՔՀԿ-ների մասնակցության հնարավորությունները**, և մի շարք որոշումներ և իրավական ակտեր ընդունվեցին արագ և հապճեպ եղանակով: Այս որոշումներից շատերը վերաբերում էին համավարակի հետ կապված հարցերին, սակայն եղել են նաև ՔՀԿ միջավայրին վերաբերող իրավակարգավորումներ, ինչպիսիք են սույն զեկույցի այլ ոլորտներում նկարագրված՝ ՔՀԿ օրենսդրության փոփոխությունները և քրեական օրենսգրքի՝ բռնության կոչերը քրեականացնող փոփոխությունները:

Տեղական մակարդակով տեղեկատվության մատչելիությանն ու որոշումների կայացմանը նպաստող օրենսդրական փոփոխությունների շարքում հարկ է նշել 2020 թվականի սկզբին ընդունված «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքում կատարված փոփոխությունները: Փոփոխությունները նախատեսում են, որ ավելի քան 20000 բնակչություն ունեցող համայնքներում **տեղական իրավական ակտերը պետք է տեղադրվեն համայնքային կայքերում՝ հանրային քննարկման համար**, իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքի հետ փոխգործելիությամբ: 2022 թվականից սկսած այս դրույթը կվերաբերի բոլոր համայնքներին՝ անկախ բնակչության թվից[17]: Բացի այդ, ըստ նույն փոփոխությունների, 2022 թվականից սկսած **բոլոր**

[17] ՀՀ օրենքը «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին, 24.01.2020, հոդված 1.2 և 4.3, https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=139078

համայնքները պետք է ունենան պաշտոնական կայք (ներկայումս կայքը պարտադիր է 3000 և ավելի բնակիչ ունեցող համայնքների համար)[18]:

2019 թվականի դեկտեմբերին ՀՀ շրջակա միջավայրի նախարարությունը հանրային քննարկման ներկայացրեց «Տեղեկատվության ազատության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու նախագիծը[19], որը 2020 թվականի ապրիլին հաստատվեց կառավարության կողմից և ուղարկվեց Ազգային ժողով: Ըստ նախագծի՝ **առաջարկվել է սահմանափակել տեղեկատվության տրամադրումը այն դեպքերում, երբ «այն կարող է բացասաբար անդրադառնալ շրջակա միջավայրի,** այդ թվում՝ հազվագյուտ տեսակների բազմացման վայրերի վրա»: Մի շարք ՔՀԿ-ներ քննադատել են նախագիծը՝ կոչ անելով չեղարկել դրա հետագա քննարկումը և նշելով, որ նոր հոդվածը կարող է հիմք դառնալ տեղեկատվության հայեցողական մերժման համար[20]:

Ինչպես նշվել է «ՔՀԿ չափիչի» 2019 թվականի զեկույցում, **պետական մարմինների կողմից տեղեկատվության հարցումների պատասխանների ուշացման, անհիմն մերժումների և թերի պատասխանների բազմաթիվ դեպքեր կան**: Ըստ Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեի (ԽԱՊԿ) զեկույցի՝ 2019 թվականին տեղեկատվություն ստանալու և տարածելու իրավունքի խախտման 108 դեպք է գրանցվել՝ 10-ով ավելի, քան 2018 թվականին էր[21]: Այսպիսով, իրավիճակը այս առումով չի բարելավվել: Օրենքը նախատեսում է նաև պետական մարմինների կողմից տեղեկատվության հրապարակում՝ բոլոր պետական գերատեսչությունները, մարզպետարանները և խոշոր համայնքները ունեն իրենց պաշտոնական կայքերը, որտեղ նրանք տեղեկություններ են հրապարակում իրենց գործունեության մասին և հետադարձ կապի հնարավորություն են տալիս: Միևնույն ժամանակ, պետական գերատեսչությունները և մասնավորապես համայնքապետարանները պատշաճ կերպով չեն հրապարակում օրենքով սահմանված տեղեկատվությունը, ինչը, հատկապես տեսանելի էր արտակարգ իրավիճակի պայմաններում: Ըստ Ինֆորմացիայի ազատության կենտրոնի դիտարկման՝ տեղեկատվության պրոակտիվ հրապարակման պահանջները պետության կողմից պատշաճ չեն իրականացվել, մասնավորապես արտակարգ դրության սկզբնական շրջանում: Հետագայում կառավարությունը ֆեյսբուքյան էջ և համացանցային կայք գործարկեց՝ հանրությունը համավարակի հետ կապված հարցերի վերաբերյալ

---

[18] Նույնը, հոդված 1.1 և 4.2, https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=139078

[19] ՀՀ օրենքի նախագիծը «Տեղեկատվության ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու վերաբերյալ, https://www.e-draft.am/projects/2153

[20] ՏԱ ՔՀԿ հայտարարություն, Ինֆորմացիայի ազատության կենտրոն, 07.04.2020, http://www.foi.am/hy/news/item/1886/, ԱլԳ ՔՀՖ Հայաստանի ազգային պլատֆորմի հայտարարությունը «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծի վերաբերյալ, 6 ապրիլի, 2020, https://eaparmenianews.wordpress.com/2020/04/06/թողարկում-302/, ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի հայտարարությունը՝ ՀՀ Կառավարության 2020 թվականի ապրիլի 2-ի նիստում հավանության արժանացած «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ, 06.04.2020, https://armla.am/46772.html

[21] Հայաստանում խոսքի ազատության վիճակի և լրագրողների ու ՁԼՄ-ների իրավունքների խախտումների մասին 2019թ. տարեկան զեկույց, Խոսքի ազատության պաշտպանության կոմիտե, 24.01.2020, https://khosq.am/reports/հայաստանում-խոսքի-ազատության-վիճակի-20

իրազեկելու համար, բայց որոշ դեպքերում այդ միջոցները համաժամանակ չեն գործել[22]:

3.6 Խոսքի ազատություն

Ընդունվել են որոշ կարգավորումներ, որոնք ուղղված են խոսքի ազատության բարելավմանը և ատելության խոսքի կանոնակարգմանը: Միևնույն ժամանակ, արտակարգ դրության պայմաններում սահմանված սահմանափակումները, ինչպես նաև լրատվամիջոցների քաղաքականացվածության բարձր մակարդակի և սոցիալական ցանցերում ատելության խոսքի հետ կապված շարունակվող մարտահրավերները թույլ չեն տալիս այս ոլորտում բարելավում արձանագրել, հետևաբար, ընդհանուր առմամբ, իրավիճակը մնացել է անփոփոխ:

Խոսքի ազատության բարելավման և ատելության խոսքի կարգավորման նպատակով օրենսդրության և պետական քաղաքականության մի շարք դրույթներ են ընդունվել: 2019 թվականի դեկտեմբերին ընդունված՝ Մարդու իրավունքների պաշտպանության ռազմավարությունը և դրանից բխող՝ 2020-2022 թվականների գործողությունների ծրագիրը **մի շարք գործողություններ ներառեց խոսքի ազատության ոլորտում իրավիճակի բարելավման ուղղությամբ**, մասնավորապես՝ ՁԼՄ-ներին վերաբերող օրենսդրության բարեփոխումների միջոցով, որոնք ուղղված կլինեն լրատվամիջոցների իրական սեփականատերերի թափանցիկության բարելավմանը և լրատվամիջոցների համար լիցենզավորման և հեռարձակման ընթացակարգերի սահմանափակումների վերանայմանը[23]: Ըստ գործողությունների ծրագրի, այս փոփոխություններն ակնկալվում են 2021 թվականի երկրորդ կեսին: Բացի այդ, գործողությունների ծրագրում նախատեսվել են ատելության խոսքի խնդիրները հասցեագրող մի շարք միջոցառումներ:

2019 թվականի դեկտեմբերին **Ազգային ժողովում ստեղծվեց աշխատանքային խումբ՝** ուսումնասիրելու և քննարկելու ատելության խոսքի դեմ պայքարի միջազգային լավագույն փորձը և տեղական օրենսդրության հետ համապատասխանությունը: Սակայն աշխատանքային խմբի գործունեությունը դադարեցվեց արտակարգ դրության պատճառով: Ցուգահեռաբար՝ 2020 թվականի ապրիլի 15-ին **խորհրդարանն ընդունեց** ՀՀ արդարադատության նախարարության կողմից 2019 թվականի օգոստոսին քննարկմանը ներկայացված **բռնության հրապարակային կոչերը և արդարացումը քրեականացնող օրինագիծը**: Ըստ օրենսդրական փոփոխությունների, անձի կամ անձանց խմբի նկատմամբ բռնություն գործադրելու հրապարակային կոչերը, նման բռնությունը հրապարակայնորեն արդարացնելը կամ քարոզելը պատժվում է տուգանքով կամ ազատազրկմամբ[24]: Այս փոփոխությունը խոսքի ազատության

---

[22] Տեղեկատվության մատչելիությունը COVID 19-ի ժամանակաշրջանում, Ինֆորմացիայի ազատության կենտրոն,15.05.2020, http://www.foi.am/en/articles/item/1896/

[23] ՀՀ մարդու իրավունքների պաշտպանության ռազմավարությունից բխող 2020-2022թթ. գործողությունների ծրագիր, ՀՀ կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի N 1978-L որոշման Հավելված N 2, https://www.arlis.am/Annexes/5/Lokal_2020-1978hav2_inko.docx

[24] ՀՀ օրենքը «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին», https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=141919

որոշակի սահմանափակումներ է բերում, բայց միևնույն ժամանակ կարող է լուծում լինել ատելության խոսքի շարունակվող դրսևորումների համար, որոնք ՔՀԿ միջավայրի համատեքստում հատկապես արդիական են ընտանեկան բռնության, կրոնական և սեռական փոքրամասնությունների իրավունքների ոլորտում աշխատող ՔՀԿ-ների ու իրավապաշտպանների դեպքում:

Լրատվական կազմակերպությունների համար իրավական ոլորտում դրական փոփոխություն էր 2020 թվականի մարտին ընդունված օրենսդրական փոփոխությունները, ըստ որոնց լրատվամիջոցները **անվճար կարող են տեղեկություն ստանալու իրավաբանական անձանց պետական գրանցամատյանից**[25] (Պետական ռեգիստրից որևէ կազմակերպության մասին ամբողջական տեղեկատվություն ստանալու համար պետական տուրքը կազմում է 3000 ՀՀ դրամ (5.7 եվրո))[26]: Նշենք, «ՔՀԿ չափիչի» զեկույցում առաջարկվել էր չեղարկել պետռեգիստրի տեղեկատվության համար գանձվող վճարը՝ ՔՀԿ-ների և առհասարակ քաղաքացիների կողմից հանրային մասնակցության և վերահսկողության բարելավման համար:

2019 թվականին **լրագրողների նկատմամբ ֆիզիկական բռնությունների** թիվը զգալիորեն նվազել է, թեև ավելացել են ԶԼՄ-ների և նրանց աշխատակազմի նկատմամբ տարատեսակ ճնշումները, ինչպես նաև **լրատվամիջոցների դեմ հարուցած դատական գործերը**[27]: 2020 թվականի առաջին եռամսյակում լրատվամիջոցների նկատմամբ սահմանափակումները հիմնականում կապված էին արտակարգ դրության վերաբերյալ որոշման՝ **զանգվածային լրատվամիջոցների կողմից տեղեկատվության սահմանափակման** խնդրահարույց դրույթի հետ[28]: Կառավարության այդ որոշման 23-րդ կետի համաձայն՝ նոր կորոնավիրուսային հիվանդության վարակման դեպքերի, առողջապահական մարմինների կողմից իրականացվող միջոցառումների և դրանց վերաբերող տվյալների, ինչպես նաև ակնհայտ խուճապի հանգեցնող կամ խուճապային իրադրություն ստեղծելու իրական վտանգ պարունակող տեղեկությունների վերաբերյալ հրապարակումների, տեղեկատվական նյութերի, հարցազրույցների, հաղորդումների հրապարակային տարածումը կատարվում է միայն պարետատան կողմից տրամադրված տեղեկատվությանը (պաշտոնական տեղեկատվությանը) հղում կատարելով:

---

[25] ՀՀ օրենքը «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին, 06.03.2020, https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=140637

[26] ՀՀ օրենքը «Պետական տուրքի մասին», 27.12.1997, հոդված 20, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=142614

[27] Հայաստանում խոսքի ազատության վիճակի և լրագրողների ու ԶԼՄ-ների իրավունքների խախտումների մասին 2019թ. տարեկան զեկույց, Խոսքի ազատության պաշտպանության կոմիտե, 24.01.2020, https://khosq.am/reports/հայաստանում-խոսքի-ազատության-վիճակի-20; Մտահոգություն Հայաստանի լրատվամիջոցների նկատմամբ դատական ոտնձգությունների վերաբերյալ, Լրագրողներ առանց սահմանների, 12.02.2020, https://rsf.org/en/news/concern-about-judicial-harassment-armenias-media

[28] Հայաստանում խոսքի ազատության վիճակի և լրագրողների ու ԶԼՄ-ների իրավունքների խախտումների մասին 2020թ. առաջին եռամսյակային զեկույց, Խոսքի ազատության պաշտպանության կոմիտե, 29.04.2020, https://khosq.am/reports/հայաստանում-խոսքի-ազատության-վիճակի-21

Ավելի ուշ (մարտի 19-ին) այս դրույթը վերանայվեց՝ բացառություններ ներառելով, մասնավորապես այն հրապարակումների համար, որոնք հղում են կատարում միջազգային կազմակերպությունների և օտարերկրյա պետությունների պաշտոնատար անձանց կայքերի և սոցիալական ցանցերի պաշտոնական էջերին[29]: Մի շարք լրատվական կազմակերպություններ հայտարարությամբ հանդես եկան այս դրույթների դեմ՝ դրանք համարելով անհամաչափ և ոչ խելամիտ, մանավանդ հաշվի առնելով «խուճապի հանգեցնող տեղեկատվության» հակասական գաղափարը, որն իր անհստակության պատճառով կարող էր բերել կամայական որոշումների[30]: Մի քանի լրատվամիջոցներ և սոցիալական ցանցերի օգտատերեր ստիպված եղան ջնջել իրենց հրապարակած լուրերը, որոնք համարվել էին ոչ տեղին[31]: ԵԱՀԿ մամուլի ազատության հարցերով ներկայացուցիչ Հարլեմ Դեզիրը նույնպես իր մտահոգությունը հայտնեց ընդունված կանոնակարգերի վերաբերյալ[32]: ՔՀԿ-ների և միջազգային կազմակերպությունների ճնշման արդյունքում համապատասխան դրույթները մարտի 25-ին վերանայվեցին՝ որոշ սահմանափակումների մեղմացմամբ, իսկ արտակարգ դրության երկարաձգման մասին ապրիլի որոշմամբ առհասարակ հեռացվեցին[33]:

3.7 Մասնավոր կյանքի իրավունք

Այս ոլորտում կան ինչպես դրական, այնպես էլ բացասական զարգացումներ՝ կապված «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքում և «Արտակարգ դրության մասին» օրենքում օրենսդրական փոփոխությունների հետ, բայց ընդհանուր առմամբ, իրավիճակը մնում է անփոփոխ:

Հետևելով «ՔՀԿ չափիչի» 2019 թվականի զեկույցի առաջարկությանը և հիմք ընդունելով հիմնադրամների տարեկան հաշվետվությունում իրենց ինքնությունը չբացահայտելու մասին աշխատակիցների իրավունքը՝ ԹԻՀԿ առաջարկության հիման վրա **այս պահանջը հանվեց «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքից**[34]:

2020 թվականի մարտի 31-ին «Արտակարգ դրության մասին» օրենքում փոփոխություններ ընդունվեցին՝ թույլ տալով **իշխանություններին**

---

[29] ՀՀ կառավարության N 298-Ն որոշում Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրություն հայտարարելու մասին, 16.03.2020 (խմբ. 19.03.2020), https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=140392
[30] Հայտարարություն, Խոսքի ազատության պաշտպանության կոմիտե, 20.03.2020, https://khosq.am/2020/03/20/հայտարարություն-53/
[31] Արտակարգ դրության ժամանակ մեդիայի աշխատանքն ու մեդիայի վերաբերյալ սահմանափակումները, Հարություն Ծատրյան, Հանրային լրագրության ակումբ, 2020, https://covid.pjc.am/wp-content/uploads/2020/07/arm_Research_Media_Freedom_During_COVID19.pdf
[32] «Կորոնավիրուսի պատճառով ստեղծված իրավիճակը չպետք է խանգարի Հայաստանում մեդիայի աշխատանքին». ԵԱՀԿ ԶԼՄ-ների ազատության հարցերով ներկայացուցիչ, Վիեննա, 24 մարտի 2020 թ., ԵԱՀԿ, https://www.osce.org/representative-on-freedom-of-media/449098
[33] ՀՀ կառավարության N 543-Ն որոշումը ՀՀ-ում 2020 թվականի մարտի 16-ին հայտարարված արտակարգ դրության ժամկետը երկարաձգելու և ՀՀ կառավարության 2020 թվականի մարտի 16-ի N 298-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին, 13.04.2020, https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=141255
[34] ՀՀ օրենքը «Հիմնադրամների մասին օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին», 25.03.2020, https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=141081

տեղեկատվություն հավաքել էլեկտրոնային հաղորդակցման ծառայություններից օգտվողների գտնվելու վայրի և զանգերի վերաբերյալ, որպեսզի հնարավոր լինի պարզել պոտենցիալ վարակված մարդկանց գտնվելու վայրը, տեղաշարժերը և շփման շրջանակները արտակարգ դրության ժամանակահատվածում[35]: Քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները մտահոգություն են հայտնել այս կարգավորման արդյունավետության և համաչափության կապակցությամբ[36]:

3.8 Պետության կողմից պաշտպանության պարտականություն

Այս ոլորտում հիմնական փոփոխությունը քրեական օրենսգրքում ընդունված լրացումն է՝ բռնություն գործադրելու հրապարակային կոչերը, բռնությունը հրապարակայնորեն արդարացնելը կամ քարոզելը քրեական և վարչական պատժամիջոցների ենթարկելու վերաբերյալ: Սա կարելի է համարել այս ոլորտի իրավակարգավորումների աննշան բարելավում:

ՔՀԿ չափիչի 2019 թվականի զեկույցում մատնանշվել է ՔՀԿ-ների նկատմամբ ատելության խոսքի և հարձակումների խնդիրը, մասնավորապես այն կազմակերպությունների ու ակտիվիստների նկատմամբ, որոնք պաշտպանում են ԼԳԲՏ անձանց, կանանց և կրոնական փոքրամասնությունների իրավունքները: Ավելին, երբեմն ատելության խոսք են դրսևորում պետական պաշտոնյաները: Ինչպես նշվեց վերը՝ «Խոսքի ազատության» բաժնում, 2020 թվականի ապրիլին ԱԺ-ն **փոփոխություններ ընդունեց Քրեական օրենսգրքում, որոնք վերաբերում էին որոշակի հանգամանքներով պայմանավորված բռնության հրապարակային կոչերին և բռնության հրապարակային արդարացմանը**: Փոփոխությունների նախագիծն առցանց հարթակում քննարկվել էր դեռևս 2019 թվականի օգոստոսին, և ՔՀԿ-ների առաջարկությունների հիման վրա հետագայում նախագծում ավելացավ պաշտպանվող բնութագրիչների հատուկ ցանկ՝ սեռ, ռասա, մաշկի գույն, էթնիկական կամ սոցիալական ծագում, գենետիկական հատկանիշներ, լեզու, կրոն, աշխարհայացք, քաղաքական կամ այլ հայացքներ, ազգային փոքրամասնության պատկանելիություն, գույքային վիճակ, ծննդյան կարգավիճակը, հաշմանդամություն, տարիք կամ այլ անձնական կամ սոցիալական բնույթի հանգամանքներ[37]: Այնուամենայնիվ, այս բնութագրիչներում ներառված չեն սեռական կողմնորոշումը և գենդերային ինքնությունը, որոնց մասին առաջարկ էին ներկայացրել սեռական փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության ոլորտում աշխատող ՔՀԿ-ները: Մյուս կողմից,

[35] ՀՀ օրենքը «Արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին, 31.03.2020, https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=140752
[36] Հայտարարություն, Խոսքի ազատության պաշտպանության կոմիտե, 02.04.2020, https://khosq.am/2020/04/02/հայտարարություն-55/
[37] ՀՀ օրենքը «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին», https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=141919

բնութագրիչների ոչ սպառիչ ցանկը («այլ անձնական կամ սոցիալական բնույթի հանգամանքներ» բառերը) կարող է խնդրահարույց լինել իրավական որոշակիության պակասի առումով: Վերջնական նախագծի շուրջ հանրային քննարկում չի կազմակերպվել. պատճառներից մեկը համավարակն էր, որի պայմաններում հնարավոր չէր լայնածավալ քննարկումներ անցկացնել: Միևնույն ժամանակ, ընդունված փոփոխությունները հանդիսանում են նախագծի առավել բարելավված տարբերակ, քանի որ սահմանվել են պաշտպանվող բնութագրիչները և նախատեսվել են ոչ այնքան խիստ պատժամիջոցներ՝ ներառելով տուգանքները և մինչև մեկ տարի ժամկետով ազատազրկում, ընդ որում՝ սահմանելով ավելի խիստ պատիժ, եթե օրինախախտը պետական պաշտոնյա է կամ կազմակերպված խումբ:

3.9 Պետական աջակցություն

Պետական ֆինանսավորման և կամավորության հետ կապված մի շարք օրենսդրական նախաձեռնություններ կան, որոնք դեռևս ընթացքի մեջ են, ուստի այս պահին իրավիճակը մնում է անփոփոխ:

Հետևելով «Բաց կառավարման գործընկերության» Հայաստանի գործողությունների չորրորդ ծրագրին, որտեղ նախատեսվել է բոլոր դրամաշնորհների համար մրցութային ընթացակարգ սահմանել[38], 2019 թվականին կառավարությունը քայլեր է ձեռնարկել նախարարություններում մրցութային ընթացակարգեր ստեղծելու ուղղությամբ: 2019 թվականի «ՔՀԿ չափիչի» հետազոտության ժամանակ այս գործընթացը դեռ չէր ավարտվել: 2019 թվականի նոյեմբերին ՀՀ ֆինանսների նախարարությունը փոփոխություններ **առաջարկեց ՀՀ պետական բյուջեից իրավաբանական անձանց սուբսիդիաների և դրամաշնորհների տրամադրման կարգում**, որտեղ սահմանվեցին դրամաշնորհային մրցույթների, ընտրության գործընթացի և չափանիշների հիմնական պահանջները: Այնուամենայնիվ, այս զեկույցը գրելու պահին կառավարությունը դեռևս չէր հաստատել այդ փոփոխությունները, և նախարարությունները մրցույթների կազմակերպման և ծրագրերի մոնիտորինգի գործընթացում առաջնորդվել են իրենց սեփական ընթացակարգերով:

2020 թվականի մայիսին ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը հանրային քննարկման ներկայացրեց **«Կամավորական գործունեության և կամավոր աշխատանքի մասին» ՀՀ օրենքի նախագիծը**, ինչպես նաև այլ օրենքներում համապատասխան փոփոխությունների նախագծերը[39]: Նոր նախագիծը զգալի բարելավում էր 2017-2018 թվականների ընթացքում քննարկված նախորդ տարբերակների համեմատ,

[38] «Բաց կառավարման գործընկերություն» նախաձեռնության շրջանակներում Հայաստանի Հանրապետության գործողությունների չորրորդ ծրագիր (2018-2020), ՀՀ կառավարության 2018 թվականի նոյեմբերի 15-ի N 1307-Լ որոշման հավելված, 15.11.2018, https://www.arlis.am/Annexes/5/Lokal_2019N1130-L.doc

[39] «Կամավորական գործունեության և կամավոր աշխատանքի մասին» օրենքի նախագծի և դրանից բխող մի շարք օրենքներում լրացումներ և փոփոխություններ նախատեսող օրենքների նախագծերի փաթեթ, https://www.e-draft.am/projects/2516

քանի որ այն ավելի քիչ սահմանափակումներ և ավելի շատ ճկունություն էր նախատեսում կամավորներ ներգրավվող կազմակերպության համար՝ կամավորների վերաբերյալ տեղեկատվության կառավարման գործում: Միևնույն ժամանակ, այն պարունակում էր մի քանի խնդրահարույց կետեր, օրինակ՝ կամավորներին ձեռնարկատիրական գործունեության մեջ ներգրավելու արգելքը: ԹԻՀԿ-ն առաջարկել է համապատասխան իրավական դրույթները ներառել աշխատանքային օրենսգրքում՝ այս ոլորտի գերկարգավորումից խուսափելու համար: ՔՀԿ-ների կողմից նախարարությանը ներկայացվել են նաև այլ առաջարկներ՝ հանել կամավորության ոլորտների սահմանումը, կամավորների համար խթաններ ներառել, բարելավել կամավոր աշխատանքի տեսանելիությունը և ճանաչումը և այլն[40]: Ձեկույցը գրելու պահին նախագիծը վերանայման փուլում էր:

3.10 Պետություն-ՔՀԿ համագործակցություն

Խորհրդակցական մարմինները՝ նախարարություններին կից հասարակական խորհուրդները, համատեղ աշխատանքային խմբերը և այլն, համավարակի ժամանակահատվածում չեն գործել: Մյուս կողմից, զգալի համագործակցություն է հաստատվել կամավորական և մարդասիրական օգնության նախաձեռնությունների շուրջ: Ընդհանուր առմամբ, այս ոլորտում հստակ դրական կամ բացասական տեղաշարժ չի գրանցվել:

Համավարակով և արտակարգ իրավիճակով պայմանավորված սահմանափակումների պատճառով 2020 թվականի մարտից ի վեր **աշխատանքային խմբերի և հասարակական խորհուրդների հանդիպումներ գրեթե տեղի չեն ունեցել**: ՔՀԿ-ների հետ շփման գործընթացում կառավարությունը այնքան ակտիվ չի օգտագործում առցանց միջոցները, որքան դա անում են ՔՀԿ-ները: Մյուս կողմից, հիմնական ուշադրությունը կենտրոնացած է համավարակի դեմ պայքարի և դրա հետևանքների մեղմացման վրա: Այս համատեքստում կառավարությունը բարելավել է իր համագործակցությունը ՔՀԿ-ների հետ այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են՝ սոցիալական ծառայությունները, առողջապահությունը և իրազեկության բարձրացումը: Օրինակ՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը «Հայկական առաջադեմ երիտասարդություն» հասարակական կազմակերպության հետ համատեղ նախաձեռնել է կամավորների հավաքագրում՝ տարեցներին և հաշմանդամներին օգնելու նպատակով: Խոցելի խմբերի ընտանիքներին սնունդ և առաջին անհրաժեշտության իրեր տրամադրող բազմաթիվ ՔՀԿ-ներ համագործակցություն են հաստատել նախարարության, ինչպես նաև մարզային և տեղական իշխանությունների հետ՝ իրենց աջակցությունն առավել համակարգված և հասցեական դարձնելու համար: ՔՀԿ-ները համագործակցել են նաև ՀՀ

[40] «Կամավորական գործունեության և կամավոր աշխատանքի մասին» օրենքի նախագծի և դրանից բխող մի շարք օրենքներում լրացումներ և փոփոխություններ նախատեսող օրենքների նախագծերի փաթեթ, Ամփոփաթերթ, https://www.e-draft.am/projects/2516/digest

առողջապահության նախարարության հետ՝ տեղեկատվություն տարածելով համավարակից պաշտպանվելու միջոցների վերաբերյալ և տրամադրելով դիմակներ:

Քանի որ քաղաքացիական հասարակության զարգացմանը միտված որևէ պետական ռազմավարություն չկա, «ՔՀԿ չափիչի» առաջարկությունների հիման վրա ԹԻՀԿ-ը նախաձեռնել է **ՔՀԿ-ների նպաստավոր միջավայրի ապահովման ճանապարհային քարտեզի** մշակում՝ կառավարության կողմից ընդունելու նպատակով:

3.11 Այլ զարգացումներ

Կեղծ լուրերն ու դավադրությունների տեսությունները, որոնք հիմնականում քաղաքական ենթատեքստ ունեն և թիրախավորում են կառավարությանը, բացասաբար են անդրադարձել ՔՀԿ-ների՝ պետության հետ համագործակցության և համավարակի շրջանում իրենց գործունեության, ինչպես նաև, ընդհանուր առմամբ, նրանց վարկանիշի վրա:

Նախորդ ամիսներին մեծ թափ ստացան **COVID-19-ի վերաբերյալ դավադրության մի շարք տեսություններ**, ներառյալ՝ այնպիսիք, որոնք համավարակը կեղծ էին անվանում կամ քննադատում կառավարության հակահամաճարակային գործողությունները: Օրինակ՝ մի ՀԿ առողջապահության ոլորտի նորությունների իր կայքում հրապարակումներ է տեղադրել, որտեղ կոչ է արվել հրաժարվել պատվաստումների բոլոր հնարավոր ծրագրերից, իսկ COVID-19-ը բնութագրվում է որպես «կեղծ համաճարակ»[41]: Ըստ որոշ ենթադրությունների՝ այդ գործողություններն իրականացվում են նախկին պաշտոնյաների հետ կապ ունեցող ՔՀԿ-ների և խմբերի կողմից՝ ներկայիս կառավարությունը վարկաբեկելու համար: Պետք է նշել, որ ԲՀՀ-ի դեմ արշավը ևս կապված է այդ նույն խմբերի հետ, որոնք ակտիվորեն տարածում են սեքսիզմ, հոմոֆոբիա և ատելության խոսք պարունակող հռետորաբանություն[42]:

Կեղծ լուրերի և ատելության խոսքի տարածումը կարող է բացասաբար անդրադառնալ ՔՀԿ-ների վարկանիշի վրա և խոչընդոտել խոցելի սոցիալական խմբերի պաշտպանությանը և աջակցմանն ուղղված գործունեությանը՝ դրանով մարտահրավեր դառնալով ՔՀԿ հատվածի համար: Այս խնդիրը հնարավոր կլինի լուծել թափանցիկության բարձրացման, բնակչության իրազեկման և մեդիա գրագիտության բարելավման միջոցով:

[41] Հայաստան՝ ԱՄՆ կառավարությունը ֆինանսավորում է COVID-ի վերաբերյալ կեղծ տեղեկատվությունը, Տաթև Հովհաննիսյան, EurasiaNet, 28.05.2020, https://eurasianet.org/armenia-us-government-funding-covid-disinformation

[42] «Հայաստանն առաջնահերթ է»՝ ինչ է թաքնված Հայաստանի ծայրահեղ աջերի ակտիվության հետևում, Արմեն Գրիգորյան, Open Democracy, 4 September 2019, https://www.opendemocracy.net/en/odr/armenia-first-behind-the-rise-of-armenias-alt-right-scene/

IV.ՀԻՄՆԱԿԱՆ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՔՀԿ միջավայրի հիմնական առաջնահերթությունները «ՔՀԿ չափիչի» վերջին զեկույցից հետո գրեթե չեն փոխվել: ՔՀԿ-ների ֆինանսական կայունությունը և մասնակցությունը քաղաքականության մշակմանը և իրականացմանը շարունակում են մնալ առաջնահերթ ոլորտներ և անգամ ավելի մեծ կարևորություն են ստացել COVID-19 մարտահրավերների համատեքստում:

Եթե դիտարկենք «ՔՀԿ չափիչի» նախորդ զեկույցը, կարող ենք տեսնել, որ այս պահին ամբողջությամբ իրականացվել է զեկույցում ներկայացված մեկ առաջարկություն, այն է՝ վերացնել հիմնադրամների տարեկան հաշվետվություններում աշխատակիցների անունները հրապարակելու պահանջը: Երկու առաջարկություն՝ պարտադիր աուդիտի պահանջի վերացումը և երրորդ կողմի հարձակումներից և ատելության խոսքից պաշտպանությունը մասնակիորեն իրականացվել են պարտադիր աուդիտի համար նախատեսված շեմը բարձրացնելու և բռնության կոչերի վերաբերյալ օրենսդրական փոփոխություններ ընդունելու, ինչպես նաև՝ ատելության խոսքի դեմ պայքարի հետագա քայլեր պլանավորելու միջոցով: Չորս առաջարկություն՝ ՔՀԿ-ների գործող միջավայրի վերաբերյալ ճանապարհային քարտեզի մշակումը, պետական ֆինանսավորման արդյունավետության և թափանցիկության բարելավումը (երկուսն էլ ներառվել են զեկույցի առանցքային առաջարկներում), ինչպես նաև ոստիկանության կողմից հավաքների մասնակիցների իրավունքների խախտման խնդիրների հասցեագրումը և կամավորության խթանման ուղղությամբ իրավական կարգավորումների ընդունումը քննարկման փուլում են կամ նախատեսվում են իրականացնել: Մյուս վեց առանցքային առաջարկությունները և ոլորտային 30 առաջարկությունները դեռևս չեն իրականացվել:

Փորձագետների հետ խորհրդակցությունները և «ՔՀԿ չափիչի» բացահայտումները ցույց են տալիս, որ ՔՀԿ-ների համար բարենպաստ միջավայրի ապահովման առանցքային առաջնահերթությունները կարելի է խմբավորել երկու հիմնական ոլորտներում՝ ՔՀԿ-ների ֆինանսական կայունություն և մասնակցություն:

Անհրաժեշտ են **անհատների և ընկերությունների նվիրատվությունների խրախուսման և ՔՀԿ-ների տնտեսական գործունեության խթանմանն ուղղված միջոցառումներ՝** նվիրատվությունների համար հարկային խթաններ, տնտեսվարող սուբյեկտների համեմատ ՔՀԿ-ների տնտեսական գործունեության նկատմամբ առնվազն հավասար հարկման մեխանիզմներ, պետական ֆինանսավորման արդյունավետության և թափանցիկության բարելավում՝ ներառյալ ՔՀԿ-ների ծառայությունների պատվիրակման ինստիտուցիոնալ մեխանիզմների ստեղծման միջոցով:

Պետք է վերջ տալ առանց ՔՀԿ-ների և հասարակության հետ խորհրդակցելու հրատապ որոշումներ կայացնելու պրակտիկային, քանի որ այն կարող է վնասել քաղաքականության մասնակցային մշակման արդեն իսկ առկա նախադրյալները: **Մասնակցության դրույթների գործնական կիրառումը կարիք ունի հետագա կատարելագործման:** Առաջարկվում է, որ պետությունը ինստիտուցիոնալ մեխանիզմների ներդնի քաղաքականության իրականացման և մոնիտորինգի գործընթացում ՔՀԿ-ների ներգրավման համար՝ ներառյալ պետության կողմից պատվիրակման միջոցով, պարտադիր դարձնի քննարկումները որոշումների կայացման վաղ փուլերում և օգտագործի մասնակցության այլընտրանքային գործիքներ և մեթոդներ, օրինակ՝ առցանց միջոցներ՝ արտակարգ իրավիճակում ՔՀԿ-ների մասնակցությունը ապահովելու համար:

Ինչպես նշված է «ՔՀԿ չափիչի» 2019 թվականի զեկույցում՝ անհրաժեշտ է **ՔՀԿ-ների նպաստավոր միջավայրի համապարփակ ճանապարհային քարտեզ** մշակել, որը կանդրադառնա ՔՀԿ միջավայրի առաջնահերթ խնդիրներին և կօգնի ուղղորդել կառավարության կողմից մշակվող քաղաքականությունն ու ջանքերը՝ առավել նպաստավոր միջավայրի ապահովման ուղղությամբ: Հայաստանում քաղաքացիական հասարակության համար նպաստավոր միջավայրի ստեղծման նպատակով ռազմավարական ճանապարհային քարտեզի ընդունման վերաբերյալ առաջարկությունն ընդգրկվել է Եվրոպայի խորհրդի Միջազգային ոչ կառավարական կազմակերպությունների համաժողովի վերջին զեկույցում, որը պատրաստվել է 2019 թվականի նոյեմբերին իրականացված պաշտոնական այցի արդյունքների հիման վրա[43]:

[43] Քաղաքացիական մասնակցությունը որոշումների կայացման գործընթացին, Փաստահավաք այց Հայաստան, 27-29 նոյեմբերի 2019 թ., Զեկույց, Եվրոպայի խորհրդի Միջազգային ոչ կառավարական կազմակերպությունների (ՄՈԿԿ) համաժողով, հունիս 2020 թ., https://rm.coe.int/report-visit-of-the-conference-of-ingos-to-armenia-2019-ar/16809f00ae

V. ՀՂՈՒՄՆԵՐ

ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐ

- ՀՀ օրենքը «Հասարակական կազմակերպությունների մասին օրենքում փոփոխություններ կատարելու մասին», 25.03.2020, https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=141094
- ՀՀ օրենքը «Հիմնադրամների մասին օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին», 25.03.2020, https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=141081
- ՀՀ օրենքը «Հասարակական կազմակերպությունների մասին օրենքում փոփոխություն կատարելու մասին», 04.12.2019, https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=137758
- ՀՀ օրենքը «Արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին, 31.03.2020, https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=140752
- ՀՀ օրենքը «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին, 24.01.2020, https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=139078
- ՀՀ օրենքը «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին», https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=141919
- ՀՀ օրենքը «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին, 06.03.2020, https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=140637
- ՀՀ օրենքը «Պետական տուրքի մասին», 27.12.1997, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=142614
- ՀՀ կառավարության N 298-Ն որոշում Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրություն հայտարարելու մասին, 16.03.2020 (խմբ. 19.03.2020), https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=140392
- ՀՀ կառավարության N 543-Ն որոշումը ՀՀ-ում 2020 թվականի մարտի 16-ին հայտարարված արտակարգ դրության ժամկետը երկարաձգելու և ՀՀ կառավարության 2020 թվականի մարտի 16-ի N 298-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին, 13.04.2020, https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=141255
- ՀՀ կառավարության N 729-N որոշումը Հայաստանի Հանրապետությունում 2020 թվականի մարտի 16-ին հայտարարված արտակարգ դրության

ժամկետը երկարաձգելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի մարտի 16-ի N 298-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին, 14.05.2020, https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=142401

- ՀՀ ՊԵԿ նախագահի թիվ 477-Ն հրամանը «Հասարակական կազմակերպությունների գործունեության հաշվետվության օրինակելի ձևը, հրապարակման և ներկայացման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2019 թվականի փետրվարի 15-ի թիվ 102-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին», 27.05.2020, https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=142876
- «Բաց կառավարման գործընկերություն» նախաձեռնության շրջանակներում Հայաստանի Հանրապետության գործողությունների չորրորդ ծրագիր (2018-2020), ՀՀ կառավարության 2018 թվականի նոյեմբերի 15-ի N 1307-L որոշման հավելված, 15.11.2018, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=133780
- ՀՀ մարդու իրավունքների պաշտպանության ռազմավարությունից բխող 2020-2022 թթ. գործողությունների ծրագիր, ՀՀ կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի N 1978-L որոշման Հավելված N 2, https://www.arlis.am/Annexes/5/Lokal_2020-1978hav2_inko.docx
- «Կամավորական գործունեության և կամավոր աշխատանքի մասին» օրենքի նախագծի և դրանից բխող մի շարք օրենքներում լրացումներ և փոփոխություններ նախատեսող օրենքների նախագծերի փաթեթ, https://www.e-draft.am/projects/2516
- ՀՀ օրենքի նախագիծը «Տեղեկատվության ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու վերաբերյալ, https://www.e-draft.am/projects/2153

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԶԵԿՈՒՅՑՆԵՐ

- «Կովկասյան բարոմետր» տվյալադարան, Հայաստան, Վստահությունը հասարակական կազմակերպությունների նկատմամբ (%), https://caucasusbarometer.org/am/cb-am/TRUNGOS/
- Ազատությունն աշխարհում 2020, Հայաստան, Ֆրիդըմ Հաուս, https://freedomhouse.org/country/armenia/freedom-world/2020
- Ազգերն անցումային շրջանում 2020, Հայաստան, Ֆրիդըմ Հաուս, https://freedomhouse.org/country/armenia/nations-transit/2020
- Արտակարգ դրության ժամանակ մեդիայի աշխատանքն ու մեդիայի վերաբերյալ սահմանափակումները, Հարություն Ծատրյան, Հանրային լրագրության ակումբ, 2020, https://covid.pjc.am/wp-

content/uploads/2020/07/arm_Research_Media_Freedom_During_COVID19.pdf

- Խաղաղ հավաքների ազատության մշտադիտարկում (հոկտեմբեր-դեկտեմբեր 2019թ.), Զեկույց, Հայաստանի Հելսինկյան կոմիտե, Երևան, 2020 թ., http://armhels.com/wp-content/uploads/2020/01/Խաղաղ-հավաքների-մոնիթորինգ-հոկտեմբեր-դեկտեմբեր-2019-2.pdf
- Խաղաղ հավաքների ազատության մշտադիտարկում (հունվար-մարտ 2020թ.), Զեկույց, Հայաստանի Հելսինկյան կոմիտե, Երևան, 2020 թ., http://armhels.com/wp-content/uploads/2020/04/Խաղաղ-հավաքների-մոնիթորինգ-հունվար-մարտ-2020.pdf
- Հայաստանում խոսքի ազատության վիճակի և լրագրողների ու ԶԼՄ-ների իրավունքների խախտումների մասին 2019թ. տարեկան զեկույց, Խոսքի ազատության պաշտպանության կոմիտե, 24.01.2020, https://khosq.am/reports/հայաստանում-խոսքի-ազատության-վիճակի-20
- Հայաստանում խոսքի ազատության վիճակի և լրագրողների ու ԶԼՄ-ների իրավունքների խախտումների մասին 2020թ. առաջին եռամսյակային զեկույց, Խոսքի ազատության պաշտպանության կոմիտե, 29.04.2020, https://khosq.am/reports/հայաստանում-խոսքի-ազատության-վիճակի-21
- Հասարակական կարծիքի հարցում Հայաստանի բնակչության շրջանում, Հասարակական հարցումների կենտրոն, Միջազգային հանրապետական ինստիտուտ, սեպտեմբեր-հոկտեմբեր 2019թ., https://www.iri.org/sites/default/files/wysiwyg/iri_poll_armenia_september-october_2019.pdf
- Տեղեկատվության մատչելիությունը COVID 19-ի ժամանակաշրջանում, Ինֆորմացիայի ազատության կենտրոն,15.05.2020, http://www.foi.am/en/articles/item/1896/
- Քաղաքացիական մասնակցությունը որոշումների կայացման գործընթացին, Փաստահավաք այց Հայաստան, 27-29 նոյեմբերի 2019 թ., Զեկույց, Եվրոպայի խորհրդի Միջազգային ոչ կառավարական կազմակերպությունների (ՄՈԿԿ) համաժողով, հունիս 2020 թ., https://rm.coe.int/report-visit-of-the-conference-of-ingos-to-armenia-2019-ar/16809f00ae

- Մտահոգություն Հայաստանի լրատվամիջոցների նկատմամբ դատական ոտնձգությունների վերաբերյալ, Լրագրողներ առանց սահմանների, 12.02.2020, https://rsf.org/en/news/concern-about-judicial-harassment-armenias-media
- «Կորոնավիրուսի պատճառով ստեղծված իրավիճակը չպետք է խանգարի Հայաստանում մեդիայի աշխատանքին». ԵԱՀԿ ԶԼՄ-ների ազատության հարցերով ներկայացուցիչ, Վիեննա, 24 մարտի 2020 թ., ԵԱՀԿ, https://www.osce.org/representative-on-freedom-of-media/449098
- ՏԱ ՔՀԿ հայտարարություն, Ինֆորմացիայի ազատության կենտրոն, 07.04.2020, http://www.foi.am/hy/news/item/1886/
- Հայտարարություն արտակարգ դրության ընթացքում հավաքների ազատության իրավունքի վիճակի վերաբերյալ, 06.06.2020, Հայաստանի Հելսինկյան կոմիտե, http://armhels.com/wp-content/uploads/2020/06/Հայտարարություն.pdf
- ԱԼԳ ՔՀՖ Հայաստանի ազգային պլատֆորմի հայտարարությունը «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծի վերաբերյալ, 6 ապրիլի, 2020, https://eaparmenianews.wordpress.com/2020/04/06/թողարկում-302/
- ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի հայտարարությունը՝ ՀՀ Կառավարության 2020 թվականի ապրիլի 2-ի նիստում հավանության արժանացած «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ, 06.04.2020, https://armla.am/46772.html
- Հայտարարություն, Խոսքի ազատության պաշտպանության կոմիտե, 20.03.2020, https://khosq.am/2020/03/20/հայտարարություն-53/
- Հայտարարություն, Խոսքի ազատության պաշտպանության կոմիտե, 02.04.2020, https://khosq.am/2020/04/02/հայտարարություն-55/
- Հայաստան՝ ԱՄՆ կառավարությունը ֆինանսավորում է COVID-ի վերաբերյալ կեղծ տեղեկատվությունը, Տաթև Հովհաննիսյան, EurasiaNet, 28.05.2020, https://eurasianet.org/armenia-us-government-funding-covid-disinformation
- «Հայաստանն առաջնահերթ է»՝ ինչ է թաքնված Հայաստանի ծայրահեղ աջերի ակտիվության հետևում, Արմեն Գրիգորյան, Open Democracy, 4 September 2019, https://www.opendemocracy.net/en/odr/armenia-first-behind-the-rise-of-armenias-alt-right-scene/

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՐԹԱԿՆԵՐ ԵՎ ԱՅԼ ՀՂՈՒՄՆԵՐ

- Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայք, https://www.e-draft.am
- Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգ, https://www.arlis.am
- Հայաստանի Հանրապետության էլեկտրոնային կառավարում, https://www.e-gov.am
- Պետական գրանցման/հաշվառման/ համար անհրաժեշտ փաստաթղթեր, տուրքերի դրույքաչափեր և ժամկետներ, ՀՀ կառավարության էլեկտրոնային ռեգիստր, https://www.e-register.am/am/docs/49

ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐԻ ՑԱՆԿ

1. **Անահիտ Չիլինգարյան,** իրավաբան
2. **Աշոտ Մելիքյան,** Խոսքի ազատության պաշտպանության կոմիտե
3. **Արփինե Հակոբյան,** «ՀԿ կենտրոն» քաղաքացիական զարգացման ՀԿ
4. **Գայանե Մկրտչյան,** Եվրասիա համագործակցություն հիմնադրամ
5. **Լինե Ուրբան,** Հայաստանում ԵՄ պատվիրակություն
6. **Լուսինե Հակոբյան,** ԱՄՆ ՄԶԳ Հայաստան
7. **Նունե Պեպանյան,** «Օրենսդրության զարգացման և իրավական հետազոտությունների կենտրոն» հիմնադրամ
8. **Շուշան Դոյդոյան,** Ինֆորմացիայի ազատության կենտրոն
9. **Ռաֆայել Իշխանյան,** Հայաստանի Հելսինկյան կոմիտե
10. **Վալենտինա Գևորգյան,** Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստան
11. **Օլգա Ազատյան,** հետազոտող